Խորհրդային բանակի սպան հացադուլ է հայտարարում

Մայիսի 29-ից Ազատության հրապարակում հացադուլ է հայտարարել խորհրդային բանակի ավագ լեյտենանտ, երկու զավակների հայր, Աֆղանստանում ծառայած 28-ամյա կիեւցի Օլեգ Կրաեւսկին:

Բանն այն է, որ Օլեգ Կրաեւսկին արդեն չորս անգամ դիմել է բանակային կենտրոնական ղեկավարությանը իրեն զինված ուժերում ծառայությունից ազատելու խնդրանքով, բայց ապարդյուն:

Ինչո՞ւ նա չի ուզում այլեւս ծառայել խորհրդային բանակում:

«Հորս մահվանից հետո մայրս միայնակ է մնացել: Բայց դա միակ պատճառը չէ: Հարաբերություններն սպաների եւ զինվորների միջեւ չափազանց սրված են, ավելի երկար ծառայած զինվորները ճնշում են նորեկներին, երբեմն էլ ստորացնում: Գողություն, խարեություն, ո՞րն ասեմ:

Ես չեմ ուզում ծառայել խորհրդային զինված ուժերում նաեւ այն պատճառով, որ վերջին ժամանակներս բանակը կատարում է պատժիչ գործողություններ խաղաղ բնակչության նկատմամբ»:

Կրաեւսկին, որն արդեն երեք տարի է ինչ ծառայում է Հայաստանում եւ իր իսկ վկայությամբ ունի լավ հարաբերություններ հայ բնակչության հետ, հայտարարում է.

«Ես դեմ եմ խորհրդային բանակի կատարած վայրագություններին Հայաստանում, ԼՂԻՄ-ում եւ Ադրբեջանի հայաբնակ շրջաններում»:

սեփ. թղթ.